# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
## փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am


№ E/13/1690-21 առ "30" 06 2021թ.

Ձեր № ___________ առ "___" ______ 2021թ.

{№01/092 առ 03.05.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ}

**«Ազուռ» ՍՊԸ-ի**
**տնօրեն՝ պրն. Ա.Երիջանյանին**
**E-mail: azurllc@mail.ru**

**Հարգելի պարոն Երիջանյան,**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար «Շինանյութ, շինապրանքներ, գործիքային հատուկ հարմարանքներ և մարտկոցներ» ապրանքների ձեռք բերման նպատակով «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մայիսի 3-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-42/21-01/092 պայմանագիրը, որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել՝ 1-ին չ/բ 2000 հատ պտուտամեխ 7800 (յոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, 4-րդ չ/բ 136մ$^{2}$ պառալոն 54000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 5-րդ չ/բ գաջի անկյունակ 183 հատ 36600 (երեսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում Պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքները մատակարարվել են սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի Տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից տրամադրված թիվ 06.21-137 առ 14.06.2021թ. ակտի համաձայն 4-րդ չ/բ-ով նախատեսված պառալոնը չի համապատասխանում պայմանագրի պահանջներին:

Համաձայն Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»,
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն»,
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի

պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»,

Ելնելով վերոգրյալից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԱՁՈՒՌ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մայիսի 3-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-42/21-01/092 պայմանագիրը 4-րդ չ/բ-ի մասով, և տեղեկացնում է, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Առդիր՝ թիվ 06.21-137 առ 14.06.2021թ. ակտի պատճեն – 1 էջ:

**Գլխավոր տնօրեն՝** **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60

**ՓԲԸ ՔԱՃԱԽԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**
**"ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ"**

ԱԿՏ № 06-21-137 առ "14" 06 2021թ. Էջեր 1

Մուտքային վերահսկողության

Պայմանագիր **01/92 առ 03.05.2021թ.**

Հարկային-հաշիվ **Ա № 1431860028 առ 07.06.2021թ.**

Մատակարար **«ԱԶՈՒՌ» ՍՊԸ**

1. Մուտքագրվող ապրանքների ցանկ

| № h/h | Միավոր արտադրանքի անվանումը | Արտադրանքի մակնիշավորում | Գործարանային համարը ապրանքի/ խմբաքանակը | Դասակարգումը ըստ НП -001-97 | Քանակը | Հավելված |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | Պտուտամեխ | YALIDA | | | 2000 հատ | ԾԿԱ-1000<br>ՋԱՀԱ-1000 |
| 2. | Պառալոն | 5 մմ | | | 400 մ² | ԾԿԱ |
| 3. | Գաջի անկյունակ | | | | 200 հատ | ԾԿԱ |

2. Մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել են

ա) Տարան և փաթեթվածքի վիճակը - առկա է գործարանային փաթեթավորում

բ) Ուղեկցող փաստաթղթերի լրակազմությունը – համապատասխանում է հավելված №1 կնքված պայմանագրի պահանջին 01/92 առ 03.05.2021թ.

գ) Ապրանքների լրակազմությունը – համապատասխանում է հարկային հաշվին Ա № 1431860028

դ) Ապրանքների վնասվածության արտաքին զննում - չեն հայտնաբերվել

**2.1. Դիտողություն –** փաստացի մատակարարվել է պառալոն 400 մ² հաստությունը Ø 1.7÷2 մմ, 5 մմ-ի փոխարեն

3. Եզրակացություն
- Պտուտամեխերը և գաջի անկյունակները պիտանի են օգտագործման համար
- Պառալոնը 400 մ² հաստությունը Ø 1.7÷2 մմ վերադարձնել մատակարարին (ապահովել 5 մմ հաստությունը)

| | | | |
|---|---|---|---|
| Նախագահ ՄԳՀ ՄԿ | ՏԿԲ պետ<br>պաշտոնը | Համբարձումյան Ա. | ստորագրություն |
| Հանձնաժողովի անդամներ | ՏԿԲ ճարտարագետ<br>պաշտոնը | Հովհաննիսյան Ն. | ստորագրություն |
| | ԾԿԱ պետ<br>պաշտոնը | Մաղոյան Ռ. | ստորագրություն |
| ՏԿԲ դրոշմակնիք | | | |

ЗАО "ААЭК" ОТК ՏԿԲ 14 . 06 2021թ.